ՀԱՐԱՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ, ՄԱՍ 2----------2
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ
ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ----------4
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԱՐՏԱՔԻՆ ԱՆԿԱԽ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է 2020-2022 ԹԹ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ----------5
ՌՈՒՍ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ----------6
ՀԱՅՏՆԻ ԵՆ «ՀԱՆՈՒՆ ՄԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ------7
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՌԱՆՁՆԱԿԻ
ԴԱԺԱՆՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՆՎԵԼ Է ՏՐԱՆՍ ԿԻՆ----------9
ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԱԴՐԻԱՆԱՅԻ----------11
Ի ՀԻՇԱՏԱԿ ԱԴՐԻԱՆԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻ
ԽՈՒՄԲ ԱՆՁԻՆՔ ՀԱՎԿԻԹՆԵՐ, ՇՇԵՐ ՈՒ ՔԱՐԵՐ ԵՆ ՆԵՏԵԼ ՀԱՎԱՔՎԱԾՆԵՐԻ
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ----------12
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-Ն ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ
ԹԵՀՄԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՏՐԱՆՍՖՈԲ ԳՐԱՌՈՒՄԸ----------13
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՎԱԶԱԿԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՎ----------14
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱԺՆՈՒՄ ԱՌԿԱ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2023Թ-Ի ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՎԱ----------15

ՀԱՐԱՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ, ՄԱՍ 2

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը նախաձեռնել է այս հարացազրույցների շարքը՝ նպատակ ունենալով արժեվորել Տրանս և ԼԳԲԻՔ ակտիվիստներին, կիսվել նրանց պատմություններով, բարձրաձայնել բռնության դեպքերի մասին և վեր հանել Հայաստանում առկա խնդիրները: Այս անգամ մեր զրուցակիցը 21 տարեկան ԼԳԲՏԻՔ ակտիվիստ է, ով կիսվում է, թե ինչ խնդիրների է բախվել կրթական հաստատություններում, զինվորական ծառայության ընթացքում և ընտանիքում և նշում, թե ինչ փոփոխություններ կուզեր տեսնել ՀՀ օրենքներում, որոնք կարող են բարելավել ԼԳԲՏԻՔ անձանց և սեքս աշխատողների կյանքը:

Ինչպիսի՞ հարաբերություններ ունեք ընտանիքի անդամների հետ:

Մայրիկիս հետ շատ լավ հարաբերություններ ունեմ, քրոջս ու փոքր եղբորս հետ նոիյնպես լավ հարաբերություններ ունեմ, իրենք իմ մասին գիտեն: Մամաիս հետ այդ թեմայով չենք խոսում, բայց ինձ թվում է՝ ինքը հասկանում է: Հայրիկի հետ «բարև-հաջող» ամենաշատը՝ եթե հանդիպում ենք, չնայած որ նույն տանն ենք ապրում:

Պատմեք դպրոցական տարիների մասին, դպրոցում տեղյակ եղե՞լ են Ձեր սեռական կողմնորոշվածության մասին:

Դպրոցում տեղյակ չեն եղել իմ սեռական կողմնորոշվածության մասին, բայց դպրոցը ավարտելուց տարիներ անց իմացա, որ դասարանցիներիս 70 տոկոսը կամ լեսբի են, կամ գեյ, բիսեքսուալ, անգամ մի հոգի տրանս էլ կար, մի քիչ ցնցող էր ինձ համար, քանի որ այդ տարիներին մենք չէինք խոսում դրա մասին, չէինք բարձրաձայնում, ովքեր որ գիտեին իրար մասին, իրենք առանձին խոսում էին: Չէինք խոսում, որովհետև վախենում էինք վատ վերաբերմունքից, նամանավանդ, որ մեր դասարանում կար Էմո տղա, ու մեր հայոց եկեղեցու պատմության ուսուցիչը ասում էր՝ դա հիվանդություն է, իրեն պետք է բուժել, ու երբ ես իրեն պաշտպանում էի, ինձ էլ էին ասում՝ հիվանդ ես, շեղված ես: Եհովայի վկա կար դասարանում, ու իր հետ նույնպես շատ վատ էին վերաբերվում: Պարզ էր, որ եթե ինչ որ մեկի սեռական կողմնորաշվածությունը հայտնի լիներ, ինքը շատ ավելի էր թիրախավորվելու, դրա համար մեր դասարանում բոլորը գաղտնի են պահել, բայց դպրոցում կար մի աշակերտ, որ բացահայտ խոսում էր իր կողմնորոշվածության մասին, ու ահավոր վատ վերաբերմունք էր իր նկատմամբ:

ՀԱրդյո՞ք ստացել եք բարձրագույն կրթություն, եթե ոչ, ի՞նչն է պատճառը, որ համալսարան չեք ընդունվել:

Քոլեջում եմ սովորել ու մի կերպ ավարտել, ամեն օր կռիվներ էին՝ եթե տղաներից մեկը ավելի նուրբ էր, այդպիսի երեխաներին շատ էին վիրավորում: Քոլեջում ես սկսեցի կոմպլեքսավորվել իմ ձայնից, սկսեցի ծխել, խմել, ու ձայնս փոխվեց: Ես մինչ այդ եկեղեցական երգչախմբում էի երգում, ու ձայնս շատ բարակ էր, քոլեջում երբ ես դաս էի պատասխանում, ծաղրում էին, ու ես սկսեցի անգամ դասերը չպատասխանել, երբ որ կանչում էին, ասում էի՝ չեմ սովորել: Ես դադարեցի երգել, աշխատում էի իմ ձայնը ձայնագրված երբեք չլսել, եթե հանկարծ լսում էի, հիստերիայի մեջ էի ընկնում: Հիմա մի քիչ անցել է այդ ամենը, որովհետև երկար աշխատել եմ վրաս: Համալսարան չեմ դիմել, որովհետև մտածում էի, որ համալսարանում էլ նույնը շարունակվելու է, նույն կռիվները:

...մեր հայոց եկեղեցու պատմության ուսուցիչը ասում էր՝ դա հիվանդություն է, իրեն պետք է բուժել, ու երբ ես իրեն պաշտպանում էի, ինձ էլ էր ասում՝ հիվանդ ես, շեղված ես:

Արդյո՞ք երբևէ հանդիպել եք խտրական վերաբերմունքի բժշկական հաստատություններում:

Չէ, ես չեմ ասել, որ ես բիսեքսուալ եմ, որ ինձ խտրականացնեին կամ մերժեին, բայց եղել է, որ գնացել եմ իմ ընկերների հետ, որովհետև իրենք չեն ուզեցել մենակ գնալ, ու ահավոր խտրական վերաբերմունքի եմ ականատես եղել, հատկապես տրանս անձանց նկատմամբ, անգամ չեն էլ հետազոտել, անհիմն պատճառներ են բերել, օրինակ կին բժիշկ է եղել, որ ասել է՝ ես քեզ չեմ հետազոտի, որովհետև չեմ հասկանում՝ դու ոչ տղա ես, ոչ աղջիկ, չգիտեմ բացեմ՝ ինչ նայեմ:

Դուք ազատվե՞լ եք զինվորական ծառայությունից՝ պայմանավորված ձեր սեռական կողմնորոշվածությամբ:

Ազատվել եմ, բայց մինչ այդ զինվորական ծառայություն անցել էի, ես քոլեջի հետ համատեղ նաև Պատանի երկրապահներ էի գնում, իսկ երբ 18 տարիս լրացավ, կամավորագրվեցի ՀՀ կամավորական կազմակերպություն, ու 6 ամիս անցել եմ զինվորական ծառայություն: Վերաբերմունքը լավ էր, չնայած որ էլի ծաղրում էին ոմանք, ու ես էլի իմ ձայնի պատճառով կոմպլեքսավորվում էի: Հետո, երբ ես արդեն բանակի համար գնացի զինվորական կոմիսարիատներ, էլի նորմալ էին վերաբերվում, միայն վերջում, երբ գնացի պետի մոտ, ով պետք է ստորագրեր տարկետման թուղթը, պարզվեց նա իմ ռազմական կրթության ուսուցիչն էր եղել ու հույսեր ուներ: Ու ինքը ասում էր՝ դու հաստատ սարքում ես, խաբում ես, որ ԼԳԲՏ անձ ես, որ չգնաս բանակ: Ազատման պատճառը 18 տարեկանում առաջին անգամ զինկոմիսարիատ գնալուց փաստաթղթերում գրել էին նյարդային խնդիրներ, իսկ օրենքի փոխվելուց հետո, երբ երկրորդ անգամ գնացի, գրել են դյուրագրգիռություն:

Ենթարկվե՞լ եք ընտանեկան բռնության՝ հոգեբանական, ֆիզիկական, սեռական, տնտեսական:

Բազմիցս ենթարկվել եմ՝ հորս, հորեղբայրներիս, հորեղբորս տղայի, տատիկիս կողմից: Ամենալուրջ դեպքերից էր, երբ 14 տարեկան էի, մի անգամ խանութ ուղարկեցին, փողոցը անցնելիս մի մեքենա ինձ հարվածեց, նետեց մի կողմ, ու այդ պահին իմ դասարանցիներից մեկը, ով այդտեղ էր, զանգել էր դասղեկիս, ու դասղեկս էլ զանգել էր մեր տուն: Երբ ես վերադարձա տուն, հայրիկս ու հորեղբորս տղան հարձակվեցին վրաս՝ գոռալով, թե ինչու ես վրաերթի ենթարկվել և այլն: Ու հայրիկը փորձեց ինձ խփել, և ես էլ հունից դուրս եկա ու հարձակվեցի իր վրա: Ու ինձ համար շատ ահավոր էր, որովհետև ես վրաերթից դեռ ցավեր ունեի, իսկ տանը հարձակվում են ինձ վրա՝ հոգատարության փոխարեն: Ու նմանատիպ կռիվների, հոգեբանական ճնշումներ շատ-շատ են եղել, մի հորեղբայրս թմրամոլ էր ու շատ հաճախ հենց մեր տանը ներարկում էր անում իմ աչքի առաջ: Մյուս հորեղբայրս օրենքով գողերի շրջապատից էր, հոգեկան խանգարումներ ունի, ինքը ու իր տղան մեր հետ են ապրում, տղան նույնպես հոգեկան խնդիր ունի՝ շիզոֆրենիա: Իրենք տեղյակ չեն, որ ես ԼԳԲՏ անձ եմ, բայց գիտեն, որ շփվում եմ ԼԳԲՏ անձանց հետ: Մի անգամ հրապարակում էի տեղադրել տրանս անձանց հետ ու վերնագրել էի «իմ հրեշտակներ», ու մեր բարեկամներից մեկը տեսել էր, ցույց էր տվել հայրիկիս, հայրիկը զանգել էր ասում էր՝ գալու եմ քեզ մորթեմ:

Ի՞նչքանով է Հայաստանը ապահով սեքս աշխատող անհատների համար:

Ես զբաղվել եմ սեքս աշխատանքով, բայց շատ կարճ, ու խտրականության կամ բռնության չեմ ենթարկվել այդ ընթացքում: Ընդհանուր ապահովության տեսանկյունից ես կարծում եմ, որ նույնասեռական տղամարդկանց համար համեմատաբար վատ են պայմանները, ու եթե իմացվում է դրա մասին, մեծ խայտառակություն է, անգամ եթե հետերոնորմատիվ տղամարդիկ կանանց հետ սեքս աշխատանքով են զբաղվում, էլի խարանի են արժանանում: Տրանս անձանց դեպքում բռնությունն է շատ շատ, իսկ ցիս կանանց դեպքում տուգանում են, տանում են ոստիկանանական բաժանմունքներ, այնտեղ ոստիկանները շատ վատ են վերաբերվում, հատկապես եթե փողոցում են աշխատում: Կարծում եմ, եթե սեքս աշխատանքը օրինականացվի, իրենք հարկ մուծեն, իրենց ծերությունը ավելի ապահովված կլինի, ապահովագրություն կունենան, թոշակ կունենան: Նաև լավ կլիներ, որ հակախտրականության մասին օրենքում առանձին կետ լիներ թե՛ ԼԳԲՏ անձանց, թե՛ սեքս աշխատողների համար:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության ֆինանսական աջակցությամբ կազմակերպել էր հանդիպում, որը համախմբել էր ԼԳԲՏԻՔ անձանց, նրանց ծնողներին և ընտանիքի անդամներին՝ նպատակ ունենալով զարգացնել համերաշխության միջավայր, հաղթահարել ընտանիքներում առկա կոնֆլիկտները և կառուցել ավելի ամուր ծնող-երեխա հարաբերություններ:

Վերջին տարիներին իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ ամբողջ աշխարհում չափահաս ԼԳԲՏԻՔ անձանց գրեթե կեսը օտարված է ընտանիքից, և մեկ երրորդը կարծում է, որ իրենց ծնողները երբեք չեն կարողանա ընդունել իրենց: Որպես ավանդական արժեհամակարգով ապրող հասարակության անդամներ՝ Հայաստանում նույնպես ԼԳԲՏԻՔ անձինք դժվարությունների են բախվում ծնողներին իրենց սեռական կողմնորոշվածության կամ գենդերային ինքնության մասին հայտնելիս, ծնողները հաճախ մերժում են իրենց երեխաների գենդերային ինքնությունը, գենդերային ինքնաարտահայտումը և սեռական կողմնորոշվածությունը, ինչը ցավոք երբեմն հանգեցնում է հարաբերությունների խզման:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցան անձնական փորձառությունների ու պատմությունների փոխանակման պանելային քննարկումներ, որոնց ընթացքում ինչպես ԼԳԲՏԻՔ անձինք, այնպես էլ նրանց ծնողները հնարավորություն ունեցան բարձրաձայնել այն դժվարությունների մասին, որոնց բախվել են ընտանիքներում: Ծնողները նշում էին, որ երբեմն իրենք պատրաստ չեն լինում ճիշտ արձագանքել իրենց ԼԳԲՏԻՔ երեխաների յուրահատուկ կարիքներին ու մարտահրավերներին, չնայած որ ցանկանում են օգնել նրանց:

ԼԳԲՏԻՔ անձինք հիմնականում նախընտրում են հարաբերություններ պահպանել ծնողների հետ՝ անգամ, եթե ծնողները մերժում են իրենց ինքնությունը, սակայն հարաբերությունները պահպանելու համար նրանց անհրաժեշտ են կոնֆլիկտների կառավարման և ճգնաժամերի արձագանքման հմտություններ: Այս քննարկումները հարթակ ստեղծեցին ԼԳԲՏԻՔ անձանց և նրանց ծնողների համար՝ կիսվելու իրենց պայքարով, հույսերով և նվաճումներով՝ ստեղծելով ապահով տարածք, որտեղ նրանք կարող էին աջակցություն գտնել ուրիշներից, ովքեր կիսում են իրենց մարտահրավերները:

Այսպիսի հանդիպումներ կազմակերպելով՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն մեծ կարևորություն է տալիս ԼԳԲՏԻՔ անձանց ընտանիքներում ներդաշնակության հաստատմանը, ծնողների և նրանց ԼԳԲՏԻՔ երեխաների միջև ավելի ամուր հարաբերությունների ստեղծմանը՝ ներառականությանը խթանելու և երկխոսություն ստեղծելու միջոցով:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԱՐՏԱՔԻՆ ԱՆԿԱԽ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է 2020-2022 ԹԹ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, ամրապնդելով իր գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, անցել է համապարփակ ֆինանսական աուդիտ, որն ընդգրկում էր 2020-ից 2022 թվականներն ընկած ժամանակահատվածը: Աուդիտը կազմակերպության ֆինանսական հաշվետվողականությունը ստուգելու և դրա ճշգրտության վերաբերյալ կարծիք հայտնելու գործընթաց էր, որն իրականացվել է ոլորտի արտաքին, անկախ փորձագիտական խմբի կողմից: Այս գործընթացը նպատակ ուներ մանրակրկիտ գնահատել և փաստաթղթավորել ՀԿ-ի վերջին երեք տարիների ֆինանսական գործարքները:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, վերանայելով իր ֆինանսական քաղաքականությունը և ներդնելով նոր քաղաքականություն, որոշում է կայացրել այսուհետ յուրաքանչյուր տարի իրականացնել ոչ միայն կազմակերպության, այլև ծրագրային ֆինանասական աուդիտ: Պարբերաբար ծրագրային և ֆինանսական աուդիտներ իրականացնելով՝ կազմակերպությունը տրամադրում է ռեսուրսների պատասխանատու կառավարման հստակ և շոշափելի ապացույցներ, ինչի շնորհիվ մեզ ֆինանսավորող գործընկերները կարող են վստահ լինել, որ իրենց ներդրումներն արդյունավետ են օգտագործվում, իսկ շահառուների համար տեսանելի կլինի, թե ՀԿ-ի ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացման համար որքան գումար է տրամադրվում թև ծախսվում:

Ամենամյա ֆինանսական և ծրագրային աուդիտների եզրակացությունների վերաբերյալ այսուհետ կարող եք ծանոթանալ մեր կայքում:

Ֆինանսական աուդիտի ավարտը և ամենամյա աուդիտ անցկացնելու հանձնառությունը վերահաստատում են «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նվիրվածությունը իր գործունեության մեջ թափանցիկությանը և ֆինանսական հաշվետվողականության բարձր մակարդակ ապահովելուն և պահպանելուն:

ՌՈՒՍ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Սույն թվականի օգոստոսի 7-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հանդիպում էր կազմակերպել Ռուսաստանի Դաշնությունից և Ուկրաինայից ներգաղթած ԼԳԲՏԻՔ անձանց հետ, որի նպատակն էր նրանց ծանոթացնել կազմակերպության կողմից իրականացվող նոր սոցիալական օժանդակության ծրագրին: Սոցիալական օժանդակության ծրագիրը իրականացվում է OutRight International կազմակերպության ֆինանսական աջակցությամբ և միտված է թեթևացնել ԼԳԲՏԻՔ ներգաղթյալների առջև ծառացած մարտահրավերները, ովքեր հակամարտության և հետապնդումների հետևանքով հայտնվել են ծանր դրության մեջ:
Հանդիպումը վարում էր «Իրավունքի կողմ» ՀԿ-ի հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, ով ողջունեց ներկաներին և ներկայացրեց կազմակերպության նպատակները ու իրականացվող ծրագրերը: Նա նշեց, որ OutRight International կազմակերպության աջակցությամբ իրականացվող այս ծրագրի շահառուն կարող են հանդիսանալ Ռուսաստանից և Ուկրաինից ներգաղթած այն ԼԳԲՏԻՔ անձինք, ովքեր հայտնվել են ծանր իրավիճակում՝ պայմանավորված Ուկրաինայի վրա Ռուսաստանի հարձակումով, դրան հաջորդած մոբիլիզացիայով, ճգնաժամով և Ռուսաստանի Դաշնության Պետդումայի կողմից նոր օրինագիծի ընդունումով, որը բացառապես արգելում է ցանկացած «բժշկական միջամտություն՝ ուղղված անձի սեռը փոխելուն», ինչպես նաև անվավեր է ճանաչում գենդերի իրավական ճանաչումը տրանս անձանց համար պաշտոնական փաստաթղթերում: Բացի այդ, Լիլիթ Մարտիրոսյանը հորդորեց ներկաներին ծրագրի մասին տեղեկացնել իրենց ԼԳԲՏԻՔ ընկերներին, քանի որ ընդհանուր թվով 25 անձ կարող է ստանալ սոցիալական օժանդակություն, ինչը կարող են օգտագործել բնակարանի վարձակալության, կոմունալ վճարումների, հորմոնալ թերապիայի կամ պարեն ձեռք բերելու համար:
Օժանդակության դիմելու համար անհրաժեշտ է լրացնել կից հայտը: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն երաշխավորում է տրամադրված անձնական տվյալների գաղտնիությունը:
Հանդիպման երկրորդ հատվածում ռուս և ուկրաինացի ԼԳԲՏԻՔ անձինք ներկայացրեցին իրենց երկրներում իրավիճակը, երկիրը լքելու դրդապատճառները, ինչպես են կարողացել վերագտնել իրենց կյանքը Հայաստանում, և թե ինչ խնդիրների են բախվում այստեղ՝ որպես խոցելի խմբի անդամներ: Ներկաների մեծամասնությունը փաստում էր, որ տեղափոխման պատճառը եղել է Ռուսաստանի կողմից Ուկրաինայի վրա հարձակումը և դրան հետևած մոբիլիզացիան, սակայն կային նաև անհատներ, ովքեր ցանկություն են ունեցել լքել Ռուսաստանը մինչ պատերազմը՝ պայմանավորված ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ ճնշումներով և ընտանիքներում խնդիրներով:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը մշտապես կանգնած է եղել մարգինալացված խմբերի կողքին և եղել է ԼԳԲՏԻՔ համայնքի իրավունքների պաշտպանության ու օժանդակության առաջնագծում: Բացի այս սոցիալական օժանդակության ծրագրից, կազմակերպությունը ԼԳԲՏԻՔ անձանց առաջարկում է նաև իրավաբանական, հոգեբանական օգնություն, ինչպես նաև պարբերաբար կազմակերպում է դասընթացներ, ճամբարներ և այլ միջոցառումներ, որոնց կարող են մասնակցել ԼԳԲՏԻՔ անձինք ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից: Այսպիսի ծրագրերի շնորհիվ մենք նպատակ ունենք ստեղծել համերաշխության միջավայր և իրավահավասար և ներառական հասարակություն, որտեղ յուրաքանչյուր անհատի իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանված և հարգված կլինի:

ՀԱՅՏՆԻ ԵՆ «ՀԱՆՈՒՆ ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ամփոփել է Կարմիր Հովանոց հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացվող ենթադրամաշնորհային ծրագրի մրցութային փուլը, որը հայտարարվել էր Սեքս աշխատողների միջազգային օրվա կապակցությամբ և նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սեքս աշխատողների սոցիալական ներառականության մակարդակը: Ձևավորված հատուկ մրցութային հանձնաժողովը գնահատել է ներկայացված նախագծերը՝ ըստ նախատեսվող գործողությունների իրագործելիության, կարիքների գնահատման, ծախսերի արդյունավետության, նախագծի նկարագրության հստակության և մրցույթի նպատակներին համապատասխանելիության և առանձնացրել 4 հաղթող նախագծեր, որոնք ներկայացրել են «Պատվի շարժում» ՀԿ-ն, «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ-ն, Տրանս անձանց իրավունքների պաշտպանության գլոբալ հիմնադրամը և լրագրող Աննա Եգանյանը:

«Պատվի շարժում» հասարակական կազմակերպությունը իրականացնելու է սեքս աշխատողների նկատմամբ նախապաշարմունքները վիճարկելու և սոցիալական ներառմանն աջակցելու առցանց իրազեկման արշավ, որի ընթացքում ստեղծվելու է սեքս աշխատողների խնդիրների ու իրավունքների վերաբերյալ տեղեկատվական թվային բովանդակություն՝ հոդվածների և սոցիալական ցանցերում հրապարակումների տեսքով:

«Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը իրականացնելու է «Երիտասարդական աշխատանքը հանուն սեքս աշխատող անձանց հիմնարար իրավունքների» ծրագիրը, որի նպատակն է 5-ից 10 սեքս աշխատողների համար կազմակերպել եռօրյա դասընթաց, որի ընթացքում նրանք կիրազեկվեն երիտասարդական ծրագրերի և երիտասարդների հետ աշխատելու մեթոդների մասին և ձեռք բերված գիտելիքները հետագայում կկիրառեն իրենց համայնքներում:

Տրանս անձանց իրավունքների պաշտպանության գլոբալ հիմնադրամն իրականացնելու է «Բարձրացնել Տրանս սեքս աշխատող անձանց իրազեկվածությունը՝ անվտանգ և ներդաշնակ կյանք ունենալու նպատակով» ծրագիրը, որի շրջանակում կազմակերպվելու է սեմինար, որը կհամախմբի 15 տրանս սեքս աշխատող անձանց Երևանից և ՀՀ մարզերից: Սեմինարի ընթացքում կքննարկվեն Հայաստանում սեքս աշխատողների անվտանգությանը և բարեկեցությանն առնչվող հարցերը:

Ենթադրամաշնորհային ծրագրի վերջին շահառուն՝ լրագրող Աննա Եգանյանը, իրականացնելու է սեքս աշխատող անհատների և իրավապաշտպանների հետ հարցազրույցների շարք, որի նպատակն է ձայն տրամադրել սեքս աշխատողներին, բարձրացնել նրանց խնդիրների ու կարիքների վերաբերյալ տեսանելիությունը:

Նշված ծրագրերը իրականացվելու են սույն թվականի օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում: Ծրագրերի զարգացման մասին հավելյալ կտեղեկացնենք մեր կայքում:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը կարևորում է ոլորտում գործող կազմակերպությունների հետ համագործակցությունն ու հզորացումը և հույս ունի, որ այս ծրագրերը դրական ազդեցություն կունենան և կնպաստեն սեքս աշխատող համայնքի սոցիալական ներառականությանը:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՌԱՆՁՆԱԿԻ ԴԱԺԱՆՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՆՎԵԼ Է ՏՐԱՆՍ ԿԻՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՌԱՆՁՆԱԿԻ ԴԱԺԱՆՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՆՎԵԼ Է ՏՐԱՆՍ ԿԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը խորը ցավով ու վրդովմունքով հայտնում է, որ Երևանում՝ իր իսկ բնակարանում առանձնակի դաժանությամբ սպանվել է 28-ամյա տրանս կին Ադրիանան: Դեպքը տեղի է ունեցել սույն թվականի օգոստոսի 20-ին, սպանությունից հետո բնակարանը այրել են:

Սպանված տրանս կնոջ ընկերները երեկ՝ ժամը 16:30-ի սահմաններում, զանգահարել են Իրավունքի կողմ ՀԿ-ի հիմնադիր – նախագահ Լիլիթ Մարտիրոսյանին և հայտնել սպանության մասին: Ըստ նրանց՝ Ադրիանան մեկ շաբաթ առաջ ասել էր, որ իրեն հետապնդում են:
Ապա, ոստիկանության հետ փոխկապակցված լրատվականներից մեկը գրել էր, որ ժամը 16:55-ին, ահազանգ է ստացվել, որ Կողբացի փողոցի 1-ին շենքի 11-րդ հարկի բնակարաններից մեկի լուսամուտից ծուխ է նկատվում: Հրշեջները կոտրել են դուռը, մարել կրակը: Բնակարանում հայտնաբերվել է 28-ամյա քաղաքացու դին: «Դատաբժշկի եզրակացության համաձայն՝ դիակի վրա առկա է սուր կտրող-ծակող առարկայի հարվածի 4 հետք և չի բացառվում, որ քննիչի կողմից նշանակված դիակի դատաբժշկական փորձաքննությամբ պարզվի, որ հարվածներն ավելի են», «նրան սպանելուց հետո բնակարանն ու դին այրել են»: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի և 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերի հատկանիշներով:

Այսօր՝ օգոստոսի 21-ին, ժամը 02.40-ին, Արմավիրի մարզի 26-ամյա կասկածյալը Բավրայի սահմանային անցակետում հայտնաբերվել, ձերբակալվել և տեղափոխվել է ՆԳՆ ոստիկանության Կենտրոնական բաժին: Նա ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին, հարցաքննվել՝ դեպքի հանգամանքների շուրջ, որի ընթացքում նա խոստովանել է, որ սպանությունը կատարել է ինքը, որից հետո բնակարանը հրկիզել է և փորձել է Բավրայի սահմանային անցակետով հատել ՀՀ պետական սահմանը:

Նախաքննական մարմնի որոշմամբ՝ երիտասարդը ձերբակալվել է: Նրա մասնակցությամբ շարունակում են կատարվել վարութային և ապացուցողական գործողություններ:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցներ՝ դեպքի բոլոր հանգամանքները, հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կոչ է անում ՀՀ ոստիկանությանը իրականացնել անաչառ քննություն և մեղավորին պատժել օրենքի ողջ խստությամբ, ինչպես նաև քայլեր ձեռնարկել տարածվող անպատժելիության մթնոլորտը վերացնելու համար:

ԶԼՄ ներկայացուցիչներին հորդորում ենք խուսափել ապատեղեկատվության տարածումից, սխալ և ապակողմնորոշող տերմինաբանության կիրառումից և դադարեցնել ատելության քարոզը տրանսգենդեր անձանց հանդեպ: Ատելության մակարդակն առավելապես սրվում է, երբ տարատեսակ արմատական խմբավորումներ, հասարակության այլ շերտերի ներկայացուցիչներ սպանության կոչեր ու սպառնալիքներ են հնչեցնում տրանսգենդեր անձանց նկատմամբ և մնում են անպատիժ:

Ամիսներ շարունակ արձանագրվող բռնության դեպքերը, ատելության կոչերը համապատասխան արձագանք չեն ստանում ոստիկանության կողմից, ինչը հանգեցնում է ավելի ծանր հանցագործությունների, այս դեպքում՝ սպանության:
Հիշեցնում ենք, որ նմանատիպ դեպք մի քանի տարի առաջ նույնպես եղել է, տրանս կնոջը փորձել էին այրել իր բնակարանում: Բարեբախտաբար կինը չէր մահացել՝ հասցրել էր սողալով դուրս գալ տնից: Մեկ այլ օրինակ է 2022 թվականի հուլիսի 30-ն ուղիղ եթերով տրանս կնոջ վրա հարձակված ու նրան ծեծի ենթարկած Վահե Եղիազարյանի դեպքը, ով այժմ ազատության մեջ է:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կիսում է դաժանորեն սպանված տրանս կնոջ հարազատների ու Հայաստանի ողջ ԼԳԲՏԻՔ համայնքի ցավը ու վիշտը այս ողբերգական պահին: Ի հիշատակ տրանսֆոբիայի հերթական զոհ դարձած, իր իսկ բնակարանում դանակահարված ու ողջակիզված Ադրիանայի՝ այսօր, ժամը 20:00-ին «Իրավունքի կողմ» ՀԿ-ն իրականացնում է մոմավառություն: Միանալ ցանկացողները կարող են գրել մեր ինստագրամյան կամ ֆեյսբուքյան էջերին՝ մոմավառության վայրի մասին տեղեկանալու համար:
ԼԳԲՏԻՔ համայնքի աջակիցներ, ոլորտում գործող կազմակերպություններ, իրավապաշտպաններ, հասարկական ու քաղաքական գործիչնե՛ր, Հայաստանի տրանսգենդեր համայնքը այսօր ունի ձեր բոլորի ակտիվ աջակցության կարիքը: Խնդրում ենք ոտքի կանգնել և բարձրացնել ձեր ձայնը Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ նպատակաուղղված բռնության և անարդարության դեմ:

Մոմավառություն՝ ի հիշատակ Ադրիանայի

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կիսում է դաժանորեն սպանված տրանս կնոջ հարազատների ու Հայաստանի ողջ ԼԳԲՏԻՔ համայնքի ցավը ու վիշտը այս ողբերգական պահին: Ի հիշատակ իր իսկ բնակարանում դանակահարված ու ողջակիզված Ադրիանայի՝ այսօր, ժամը 20:00-ին «Իրավունքի կողմ» ՀԿ-ն իրականացնում է մոմավառություն: Միանալ ցանկացողները կարող են գրել մեր ինստագրամյան կամ ֆեյսբուքյան էջերին՝ մոմավառության վայրի մասին տեղեկանալու համար:

ԼԳԲՏԻՔ համայնքի աջակիցներ, ոլորտում գործող կազմակերպություններ, իրավապաշտպաններ, հասարկական ու քաղաքական գործիչնե՛ր, Հայաստանի տրանսգենդեր համայնքը այսօր ունի ձեր բոլորի ակտիվ աջակցության կարիքը: Խնդրում ենք ոտքի կանգնել և բարձրացնել ձեր ձայնը Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ նպատակաուղղված բռնության և անարդարության դեմ:

Ի ՀԻՇԱՏԱԿ ԱԴՐԻԱՆԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՆՁԻՆՔ ՀԱՎԿԻԹՆԵՐ, ՇՇԵՐ ՈՒ ՔԱՐԵՐ ԵՆ ՆԵՏԵԼ ՀԱՎԱՔՎԱԾՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, ի հիշատակ նախորդ օրը իր իսկ բնակարանում դանակահարված ու ողջակիզված տրանս կնոջ՝ Ադրիանայի, երեկ՝ օգոստոսի 21-ին, ժամը 20:00-ին իրականացրել է մոմավառություն Երևանի Կոմիտասի անվան պուրակում: Մոմավառությանը մասնակցում էին Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության Արտակարգ և լիազոր դեսպան Նիկո Սխերմերսը, Մեծ Բրիտանիայի դեսպանատան քաղաքական և մամուլի բաժնի ղեկավար Քրիս Փերկինսը, ոլորտում գործող տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, իրավապաշտպաններ, Ադրիանայի ընկերները, հարյուրից ավելի ԼԳԲՏԻՔ ակտիվիստներ ու համակիրներ: Ներկա էին նաև Ադրիանայի ընտանիքի անդամները:

Բազմիցս կրկնել ենք, որ Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության ու բռնության դեպքերը համապատասխան արձագանք չեն գտնում, ինչը արդեն իսկ հանգեցրել է անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը: Ցավոք, անգամ այս ողբերգական պահին, երբ ԼԳԲՏԻՔ համայնքը և դաժանորեն սպանված տրանս կնոջ հարազատները իրենց ցավն ու վիշտն էին կիսում՝ խորհրդանշական մոմավառություն իրականացնելով, մի խումբ անձինք համարձակվեցին հարձակվել և հավկիթներ, շշեր, քար և ավազ նետել հավաքված անձանց ուղղությամբ՝ առաջացնելով տագնապ և խուճապ առանց այն էլ ծանր հոգեբանական դրության մեջ գտնվող մարդկանց մոտ: Նշենք նաև, որ միջոցառման մասին նախօրոք «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ծանուցել էր ոստիկանություն, սակայն տարածքում ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցները ոչ մի կերպ չարձագանքեցին միջադեպին և մոտեցան միայն այն բանից հետո, որ ակտիվիստները իրենք մոտեցան և կանչեցին նրանց: Միջադեպի մասին մոմավառությունից անմիջապես հետո «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն: Կոչ ենք անում ոստիկանությանը անհապաղ հայտնաբերել և պատասխանատվության ենթարկել մարդկային վիշտն անարգող և, անթաքույց ատելությամբ, բռնություն իրականացնող այդ անձանց, ինչպես նաև ուշադրություն կենտրոնացնել ու համապատասխան արձագանքի արժանացնել տրանս կնոջ սպանությունից ի վեր համացանցում շրջանառվող նորությունների տակ բռնությունը արդարացնող, ատելության խոսք, ֆիզիկական բռնության ու մահվան սպառնալիք պարունակող հազարավոր մեկնաբանությունները:

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-Ն ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԹԵՀՄԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՏՐԱՆՍՓՈԲ ԳՐԱՌՈՒՄԸ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը խստորեն դատապարտում և մասնագիտական ու հանրային ուշադրությանն է հրավիրում անկախ քաղաքական գործիչ, Երևանի ավագանու «Լույս» դաշինքի անդամ Թեհմինա Վարդանյանի՝ տրանսգենդեր անձանց նկատմամբ սխալ տերմինաբանություն կիրառող, տրանսֆոբ, հոմոֆոբ, խարան և խտրականություն պարունակող գրառման վրա: Մասնավորապես, օգոստոսի 20-ին տրանս կնոջ դաժան սպանությունից հետո Ֆեյսբուք սոցիալական ցանցում տեղադրված իր գրառման մեջ Թեհմինա Վարդանյանը տրանսգենդեր անձանց անվանել է «տարասեռ», սպանության վերաբերյալ արձագանքը՝ «վայնասուն», իրավապաշտպան կազմակերպությանը՝ տարասեռ ու խեղված զգացողություններ ունեցող ՀԿ, հետերոսեքսուալ անձանց՝ նորմալ սեռական կողմնորոշում ունեցող, իսկ գրառման վերջում հայտարարել է, որ «իրականում, գնալով ամենաանպաշտպանը դառնում ենք մենք՝ «նատուրալներս», շուտով ՀԿ կբացեմ՝ ի պաշտպանություն նորմալ սեռական կողմնորոշում ունեցող մարդկանց»:

Անընդունելի է, որ հանրային գործունեություն ծավալող քաղաքական գործիչը ոչ միայն ունենա նման թյուր պատկերացումներ գենդերային հիմնահարցերի վերաբերյալ, այլ նաև տրանսֆոբ, հոմոֆոբ, խոցելի խմբերի նկատմամբ առերևույթ բռնությունը և խտրականությունը կոծկող իր պատկերացումները արտահայտի հանրային հարթակում և ազդեցություն ունենա հասարակական ընկալման վրա: Կոչ ենք անում Թեհմինա Վարդանյանին հեռացնել իր գրառումը, հետագայում խուսափել սխալ տերմինաբանության կիրառումից և Տրանս ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ խտրականությունը և բռնությունը քողարկող, խնդիրները արհամարհող մոտեցումից:

Նշենք նաև, որ Թեհմինա Վարդանյանը 2018թ.-ին ավարտել է «Լիբերալ քաղաքականության դպրոց»-ը, որը նպատակ ունի նպաստել մարդակենտրոն հասարակության ձևավորմանը և որը հենց այս տարի հրատարակել է Ատելության խոսքը մեդիա հարթակներում, սոցիալական ցանցերում, հեռուստաթերթերում ձեռնարկը: Ակնկալում ենք, որ Լիբերալ քաղաքականության դպրոցը և այլ հասրական կազմակերպություններ ևս կմիանան մեր կոչին և հանդես կգան հայտարարությամբ՝ հորդորելով կանխել ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ ատելության խոսքը, խտրական մոտեցումը և անպատժելիության մթնոլորտի հավերժացումը:



Թարմացում՝ տրանս կնոջը ծեծի ենթարկելու և հեռախոսը հափշտակելու գործով

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՎԱԶԱԿԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՎ

Ինչպես արդեն հայտնել էինք, 2023թ. հունիսի 12-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ էր դիմել սեքս աշխատող տրանս անձ Դ.-ն և հայտնել, որ դրանից մեկ օր առաջ իր բնակարանում Սևակ անունով անձի և նրա ընկերոջ կողմից ենթարկվել էր հարձակման, ծեծի, և դանակի սպառնալիքով իրենից հափշտակել էին բջջային հեռախոսը և 35.000 ՀՀ դրամի չափով գումար:

Նույն օրը տրանս անձ Դ.-ն վարույթ իրականացնող մարմնի կողմից ճանաչվել էր տուժող:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական թիմը ներգրավվել է սույն գործի շրջանակներում և ապահովում է իրավական ներկայացուցչություն գործի բոլոր փուլերում:

2023թ. օգոստոսի 29-ին, փաստաբանի մասնակցությամբ տրանս անձ Դ.-ն առերես հարցաքննվեց Սևակ անունով անձի հետ, ով հենց հարցաքննության ընթացքում հարձակվեց տրանս կնոջ վրա, ինչպես նաև հնչեցրեց սեռական բնույթի հայհոյանքներ: Ոստիկանության աշխատակիցների կողմից նշված անձի նկատմամբ ձեռնաշղթաներ կիրառելուց հետո հարցաքննությունը շարունակվեց, և տրանս անձ Դ.-ն պնդեց հանցագործությունը նշված անձի կողմից կատարված լինելու հանգամանքը:

Սևակ անունով անձը կալանավորվել է:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հետամուտ է լինելու տրանս կնոջ նկատմամբ բռնություն կիրառած անձին արդարացի պատժի նշանակման և արդարությունը վերականգնելու հարցում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի իրավաբանական բաժնում առկա գործերի վերաբերյալ 2023թ-ի օգոստոս ամսվա

01 ԱՎԱՐՏԱԾ ԳՈՐԾ

29 ԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԵՐ

41 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

02 ՄԻԵԴ-ՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

03 ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

09 ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՐԾԵՐԸ

06 ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

15 ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՐԾԵՐԸ

07 ՆՈՐ ԴԻՄՈՒՄՆԵՐ

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

Copyright All Rights Reserved For Right Side Ngo.